# ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ

## ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Միացեալ Ընկերութեանց Տնօրէն Ժողովը երէկ բացառիկ նիստ գումարեց Յոբելինական հանդէսներուն իր մասնակցութեանց համար խորհրդակցելու համար։ Հեռագրուեցաւ Թիֆլիս Պ. Մելիք Ազարեանց, Պ. Աղեքսանդր Քալանթարի և Պ. Համբարձում Առաքելեանի որ Հոկտ. 12ին Էջմիածնի համազգային հանդէսին ներկայ գտնուին որպէս Միացեալի ներկայացուցիչներ և յանուն Ընկերութեանց շնորհաւորեն Վեհափառ Կաթողիկոսը օրուան մեծ տօնին առթիւ։

## ՀՐԱՒԷՐ

Մեծ Յոբելեանի կեդր. Յանձնաժողովի անդամները կը հրաւիրուին ամբողջաբար ներկայ գտնուիլ ժողովին՝ որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ե. 7/20 Հոկտ. կէս օրէ վերջ՝ ժամը 4ին Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ։

Դիւան